Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 39-Ն ԵՎ 41-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 39-Ն որոշումը չի համապատասխանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետին, համաձայն որի՝ մարզպետարան առաքվում է ոչ թե համայնքի ավագանու որոշման քաղվածքը, այլ՝ որոշումը:

Որոշման բովանդակության մեջ «համաձայն» բառից հետո նշված «թիվ 1» բառերը հանել: Բացի այդ, որոշման մեջ նշված չեն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված վավերապայմանները՝ ստորագրող պաշտոնատար անձի ստորագրման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը:

Որոշման մեջ տեղական ինքնակառավարման մարմինների անվանումներն անհրաժեշտ է գրառել ամբողջությամբ:

Թիվ 41-Ա որոշման նախաբանում կատարված հղումը սխալ է և թերի: Որոշման 1-ին կետում նշված «15» թվից հետո ավելացնել «համաձայն թիվ 1 հավելվածի» բառերը: Բացի այդ, որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածները կից ներկայացված չեն:

Որոշումները մարզպետարան առաքվել են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետով սահմանված ժամկետի խախտմամբ:

Կատարող՝ Ն.Մարտիրոսյան
06.02.2020թ.